ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
Հիմնադիրների ընդհանուր ժողովի
10.06.2006թ. թիվ 04 որոշմամբ

Փոփոխված է

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
բաժնետերերի տարեկան ժողովի 05.05.2023թ. թիվ 7
և արտահերթ ժողովի 07.06.2023թ. թիվ 1
որոշումներով

Խորհրդի նախագահ
Բ. ԱՍԱՏՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

Digitally signed by Martin Galstyan
Date: 2023.09.08 15:45:21 AMT
Reason: Գրանցած է

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ»

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

/փոփոխություն/

Bagrat Asatryan

Digitally signed by Bagrat Asatryan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=GARNI INVEST UCO JSC, email=info@garniinvest.am, cn=Bagrat Asatryan
Date: 2023.07.04 18:33:10 +04'00'

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Գառնի Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող վարկային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:
1.2. Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:
1.3. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
1.4. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
1.5. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
1.6. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
1.7. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:
1.8. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշաններ ու ֆիրմային ռեկվիզիտներ:
1.9. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգիրք), «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտերով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ: Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ:
1.10. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
1.11. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:

1.12. Սույն կանոնադրության 1.11 կետում նշված բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

1.13.Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,

կրճատ՝ «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ,

ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество "ГАРНИ ИНВЕСТ" УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ,

կրճատ՝ ЗАО "ГАРНИ ИНВЕСТ" УКО;

անգլերեն լրիվ՝ «GARNI INVEST» UNIVERSAL CREDIT ORGANISATION Joint Stock Company,

կրճատ՝ «GARNI INVEST» UCO JSC:

1.14. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թումանյան 32, բն. 17:

1.15. Ընկերությունը ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:

1.16. Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է:

1.17. Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և բոլոր մարմինների համար:

1.18. Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում՝ ժողովին մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների մեծամասնությամբ:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերությունը սույն կանոնադրությամբ և կանոնակարգով սահմանված խնդիրներն իրագործելիս համագործակցում է բանկերի և այլ վճարահաշվարկային հաստատությունների հետ, հաճախորդների պատշաճ մակարդակով սպասարկելու նպատակով կնքում է պայմանագրեր:

2.3. Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է կանխիկ և անկանխիկ գործառնություններ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունն իրավունք ունի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:
3.2. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության խորհրդի կողմից:
3.3. Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարները նշանակվում են Ընկերության տնօրենի կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

3.4. Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:
4.2. Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:
4.3. Ընկերությունը կարող է ժողովի որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի չափը: Կանոնադրական կապիտալի փոփոխման կարգը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:
4.4. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,500,000,000 (Մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է 121,500 (Մեկ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) հատ սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (Տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով և 28,500 (Քսանութ հազար հինգ հարյուր) հատ արտոնյալ բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (Տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

5. ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԲԱԺՆԵՏԵՏԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:
5.2 Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.
գ) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն /բացի գաղտնի փաստաթղթերից/, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին և հաշվետվություններին.
զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
ժա) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

5.3. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

5.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

5.5. Ընկերությունը տեղաբաշխել է հաստատուն շահութաբաժնով 28,500 (Քսանութ հազար հինգ հարյուր) հատ ոչ փաստաթղթային ձևի 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսեր:

5.6. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ժողովում, բացի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերից:

5.7. Արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը որոշվում է Ընկերության խորհրդի կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբից առաջ: Արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքն է՝ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքը գումարած լուծարմանը նախորդած ժամանակահատվածում հաշվեգրված և/կամ որոշված տոկոսները: Արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման և տնօրինման հետ կապված փոխհարաբերությունները, ինչպես նաև դրանց գծով շահութաբաժինը ամբողջությամբ կամ մասամբ չվճարելու կամ վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի ենթաօրենսդրական իրավական ակտերով, այդ թվում ՀՀ ԿԲ խորհրդի 05.11.2002թ. № 347-Ն որոշմամբ:

5.8. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր, կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են հաստատուն շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց

վճարվող շահութաբաժինների և /կամ լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և/կամ լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը:

5.9. Արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերով փոխարկելիս Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

5.10. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

5.11. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են սույն կանոնադրության 5.2 կետի «ա», «գ», «դ», «է» և «ը» ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սույն կանոնադրության դրույթներին համապատասխան, իսկ «բ», «ե», «զ», «թ» և «ժ» ենթակետերով սահմանված իրավունքներից՝ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

5.12. Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը:

5.13. Ընկերության բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքերում ընկերության բաժնետերերի շահերը ապահովվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

6.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի միջոցով, հեռակա կարգով քվեարկության /հարցման/ միջոցով, ինչպես նաև իրական ժամանակի ռեժիմում՝ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով հաղորդակցմամբ իրականացված նիստի միջոցով: Նման նիստը հեռակա /հարցման/ կարգով անցկացված նիստ չի համարվում: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության /հարցման/ միջոցով:

6.2. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

6.3. Տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամանակահատվածում:

6.4. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

6.5. Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն

իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ընդհանուր ժողովի գումարման ծանուցման կարգով:

6.6. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգողի ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:

ժգ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ Ընկերության այլ արժեթղթերի փոխարկվող Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) ժողովի վարման կարգի սահմանումը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում.
ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում.
իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.
իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.
իզ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
6.7. Սույն կանոնադրության 6.6. կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

7. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7.1. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:
7.2. Սույն Կանոնադրության 6.6. կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:
7.3. Սույն Կանոնադրության 6.6. կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:
7.4. Սույն Կանոնադրության 6.6. կետի «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի

սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
7.5. Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:
7.6. Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:
7.7. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին էլեկտրոնային կամ սովորական փոստով այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

8. ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, Ընկերության վերստուգողը, Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում), ինչպես նաև սույն Կանոնադրության 5.7. և 5.8. կետերում սահմանված դեպքերում նաև արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:
8.2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
8.3. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ժամկետը սահմանվում է ժողով գումարելու մասին որոշումն ընդունելուց հետո, սակայն ոչ շուտ, քան ժողովի գումարումից 60 օր առաջ:
8.4. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:
8.5. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դրանց տեսակների մասին:
8.6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:
8.7. Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

8.8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:
Սույն կանոնադրության 8.1. կետում սահմանված անձինք ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, իսկ ժողովի գումարման մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այն հրապարակելու միջոցով:
8.9. Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:
8.10. Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:
8.11. Խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, նշվում է թեկնածուի անունը, նրա Ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի, նրան առաջադրող Ընկերության բաժնետերերի անունները (անվանումները), վերջիններիս պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի:
8.12. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին ժողովի գումարմանը նախորդած ոչ ուշ քան 15 օր առաջ: Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, երբ առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կետով սահմանված ժամկետը կամ առաջարկը չի համապատասխանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին կամ առկա են նույն օրենքի հոդված 72-ի 4-րդ կետի հիմքերը:
8.13. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը կամ թեկնածու ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

9. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9.1. Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք որոշում են՝
ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
բ) ժողովի օրակարգը.
գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.
ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

10. ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԸ

10.1. Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով:
10.2. Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ, իրական ժամանակի ռեժիմում՝ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով հաղորդակցմամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:
10.3. Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝
ա) քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը.
բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:
10.4. Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

10.5. Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ արտահերթ ժողովի գումարման մասին ներ-կայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:
10.6. Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնելու Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ կողմից առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:
10.7. Եթե արտահերթ ժողով գումարելու պահանջը ներկայացվում է Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից, ապա այն պետք է պարունակի պահանջը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:
Արտահերթ ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:
10.8. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում:
10.9. Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

11. ԺՈՂՈՎՈՒՄ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
11.2. Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:
11.3. Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:
11.4. Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել

քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

11.5. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

11.6. Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

11.7. Եթե Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահն ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

11.8. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

11.9. Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

11.10. Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

11.11. Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

11.12. Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

12.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

12.2. Խորհուրդը բաղկացած է 4 անդամից:

12.3. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.
գ) ժողովների օրակարգի հաստատումը.
դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.
ե) սույն կանոնադրության 6.6 կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.
զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.
ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
թ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
ժա) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
ժդ) Ընկերության կանոնակարգի և կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերի հաստատումը.
ժե) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
ժզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
ժէ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.
ժը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.
ժթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
ի) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.
իա) 20մլն. դրամ կամ դրան համարժեք այլ արտարժույթ գումարը գերազանցող վարկերի տրամադրման կամ օրենսդրությամբ սահմանված այլ ակտիվային գործարքի իրականացումը.

իբ) 100 մլն.դրամ կամ դրան համարժեք այլ արտարժույթ գումարը գերազանցող փոխառությունների ներգրավման, պարտավորության ստանձման կամ նմանատիպ գործարքի իրականացումը.
իգ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
12.4. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:
12.5. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:
12.6. Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
12.7. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին:
12.8. Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:
12.9. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:
12.10. Խորհրդի նիստում քվորումն ապահովված է համարվում խորհրդի կազմում մտնող անձանց 1/2 ներկայության դեպքում:
12.11. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 1/2-ով: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:
12.12. Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

13.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ Ընկերության գործադիր տնօրենի և աշխատակազմի կողմից:
13.2. Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ «Բաժնետիրական

ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:
13.3. Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:
13.4. Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է ժողովի որոշմամբ:
13.5. Ընկերության գործադիր տնօրենը՝
ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
գ) գործում է առանց լիազորագրի.
դ) տալիս է լիազորագրեր.
ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

14.1. Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընկերության Խորհրդի կողմից՝ Ընկերության գործադիր տնօրենի ներկայացմամբ:
14.2. Ընկերության գլխավոր հաշվապահը իրականացնում է Ընկերության հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ՀՀ Կենտրոնական բանկի ու ՀՀ Կառավարության լիազորված մարմնի նորմատիվային իրավական ակտերի համաձայն:
14.3. Ընկերության գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատակիցների համար:
14.4. Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր Ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

14.5. Ընկերության գլխավոր հաշվապահը առնվազն եռամսյակը մեկ անգամ Ընկերության խորհրդին և Ընկերության Տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
14.6. Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական հաշվետվությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

15.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգողին:
15.2. Վերստուգողի իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:
15.3. Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:
15.4. Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգողի աշխատանքի կանոնակարգով:
15.5. Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության եռամսյակային և տարեկան արդյունքների ստուգումը, իրականացնում է ընկերության ընթացիկ և հեռանկարային գործունեության վերլուծությունն ու ռիսկայնության գնահատումը և ներկայացնում է առաջարկ դրանց կանխարգելմանը նպատակաուղղված ներքին սահմանաչափերի վերաբերյալ: Ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
15.6. Վերստուգողը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:
15.7. Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
15.8. Վերստուգողին ընտրում է ընդհանուր ժողովը՝ 3 տարի ժամկետով:

15.9. Վերստուգողը հաշվետու է ընդհանուր ժողովին:
15.10. Վերստուգողի վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

16.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտ իրականացնող կազմակերպություն, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:
16.2. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:
16.3. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

17.1. Վերստուգողը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝
ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.
բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.
գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.
դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.
ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:
17.2. Վերստուգողը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

18. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

18.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:
18.2. Ընկերության գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված Կենտրոնական բանկին և պետական կառավարման այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:
18.3. Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգողի եզրակացությամբ:
18.4. Ընկերության տարեկան հաշվետվությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են նախնական հաստատման խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

19.1. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են յուրաքանչյուր տարի ընկերության տնօրինության տակ մնացող շահույթի ազատ մնացորդից՝ դրա առնվազն հինգ տոկոսի չափով:
19.2. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:
19.3. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: